

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսների

ամբիոնի դասախոս

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Տնտեսական ձգնաժամերն իրողություն են՝ անկախ այն բանից, թե ինչ են մտածում տնտեսագետ գիտնականները և ընդունո՞ւմ են դրանց գոյությունը, թե ոչ: Դրանք պայմանավորված են օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր հանգամանքներով ու գործոններով, որոնք ուղեկցել են մարդկությանը քաղաքակրթության ձևավորման ամենավաղ ժամանակներից մինչև այժմ և ուղեկցելու են նաև ապագայում: Ճգնաժամերը հատուկ են բոլոր համակարգերին և վերջիններիս զարգացման հիմնական պայմաններից են: Խորհրդային տնտեսագիտության մեջ տիրապետող էր այն տեսակետը, թե տնտեսական ձգնաժամերը (ինչպես նաև դրանցից բխող սոցիալական, մշակութային, քաղաքական տարբերակները) հատուկ են կապիտալիստական արտադրաներին, իսկ սոցիալիստականին բնորոշ են միայն «աճի դժվարությունները»: Սակայն թեև դրանք ծնող պատճառներն ու հանգամանքները որոշ առումներով կարող են նաև նման լինել, բայց ձգնաժամերը միանգամայն ինքնատիպ են և անկրկնելի: Համաձայն ընդունված «ճյուղավորված դասակարգման»՝ առանձնացվում են ընդհանուր և տեղային (լոկալ) ձգնաժամեր: Ընդհանուր ձգնաժամերն ընդգրկում են հասարակական-տնտեսական ամբողջ համակարգը, իսկ տեղայինները՝ մեկ կամ մի քանի ենթահամակարգեր: Ըստ հիմնախնդիրների ընդունված է առանձնացնել մակրո- և միկրոձգնաժամեր: Մակրոձգնաժամերն ընդգրկում են ժողովրդատնտեսական համակարգն ամբողջությամբ, այն դեպքում, երբ միկրոձգնաժամերը տարածվում են միայն առանձին հիմնախնդիրների և հիմնախնդիրների որոշակի խմբի վրա: Իսկ քանի որ համակարգի բոլոր տարրերը փոխադարձ կապի մեջ են, ուրեմն նույնիսկ «ամենափոքր» ձգնաժամը «դոմինոյի սկզբունքով»

կարող է տարածվել նաև մյուս ենթահամակարգերի և բաղադրիչների վրա¹, եթե, մանավանդ, բացակայում է ձգնաժամային իրավիճակի կառավարումը: Զգնաժամերը կարող են լինել կանխատեսելի (օրինաչափ) և չկանխատեսված (պատահական): Օրինաչափ ձգնաժամերն առաջանում են տնտեսության զարգացման՝ հատկապես արտադրության արդիականացման, գործարարության, մակրոտնտեսական օբյեկտիվ գործոնների ազդեցությամբ և կարող են կանխատեսվել: Այդ նպատակով վերջին տասնամյակների ընթացքում ստեղծվել են համաշխարհային ձգնաժամերից խուսափելու մի շարք մեխանիզմներ, ինչպիսիք են, օրինակ՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունները, սակայն ոչ բոլոր ձգնաժամերն են կանխատեսելի: Չկանխատեսված կամ անսպասելի ձգնաժամերը հիմնականում առաջանում են կառավարման համակարգում թույլ տրված սխալների պատճառով, որոնք ակտիվացնում են հասարակական-տնտեսական գործընթացները՝ պատճառ դառնալով հիվանդագին և անցանկալի երևույթների դրսևորման: Զգնաժամերը կարող են ընթանալ ինչպես ակնհայտ, այնպես էլ գաղտնի: Ակնհայտ ընթացող ձգնաժամերը կարելի է ճանաչել և պայքարել հնարավոր բացասական հետևանքների դեմ, մինչդեռ գաղտնիները ծավալվում են աննկատ և առավել վտանգավոր են, որովհետև դրսևորվում են «պայթյունի» ձևով՝ հանկարծակի: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են նաև խոր և թեթև ձգնաժամեր: Եթե թեթև կամ փափուկ ձգնաժամերը զարգանում են առանց հիվանդագին դրսևորումների ու ցնցումների, ապա խոր ձգնաժամերը ցնցում են հասարակական-տնտեսական ամբողջ համակարգը²: Զգնաժամերն առանձնանում են նաև ըստ ժամանակային ընդգրկման՝ տևողության: Ըստ այդմ՝ ընդունված է առանձնացնել կարճաժամկետ և տևական ձգնաժամեր: Ժամանակային գործոնը շատ կարևոր է, քանի որ ինչքան տևական է այն, այնքան մեծ են վտանգները և սպառնալից հետևանքները:

Մասնագիտական գրականության մեջ տիրապետող է այն կարծիքը, թե սկզբնական շրջանում առավել արտահայտված ձևով ձգնաժամերը հանդես են եկել գյուղատնտեսության ոլորտում և հիմնականում ընդգրկել են մեկ կամ մի քանի երկրների տնտեսություններ: Դա միանգամայն բնական է, որովհետև մինչարդյունաբերական հասարակության գործունեության հիմնական ոլորտը գյուղատնտեսությունն էր, սակայն դա չի նշանակում, թե ձգնաժամերը ներառում էին միայն գյուղատնտեսության բնագավառը: Նախ, ինչպես նշել ենք վերևում, ցանկացած բնագավառում սկիզբ առած ձգնաժամերը կարող են տարածվել նաև հասարակական-տնտեսական համակարգի մյուս ոլորտներում: Բացի այդ, ձգնաժամեր կարող են առաջանալ նաև այլ ոլորտներում, որոնցից մեկի մասին, որը բռնկվել էր դեռևս մ.թ.ա. 88 թվականին Հռոմեական կայսրությունում, խոսում է Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Ֆիլիպ Քեյը: Այն բնութագրելով որպես «ֆինանսական»՝ նա որոշակի ընդհանրություններ է տեսնում դրա և 2008 թ. ԱՄՆ-ի անշարժ գույքի շուկայում սկիզբ առած ֆինանսական ձգնաժամի միջև³: Դժվար է սակայն անգամ ամբողջ Հռոմեական կայսրությունն ընդգրկած ձգնաժամը միջազգային, առավել ևս համաշխարհային համարելը: Զգնաժամերը միջազգային բնույթ ձեռք բե-

¹ Տե՛ս Макроэкономика: основы экономической теории /под. ред. Андреева С.И./, М., 2007, էջ 290:

² Տե՛ս **Коротков Э.**, Антикризисное управление: учебник. М., „Инфра–М“, 2006, էջ 305:

³ Տե՛ս Первый мировой финансовый кризис случился в I веке до н. э., <http://news.tut.by/world/122863.html>

րեցին միայն արդյունաբերական հասարակության զարգացման ուշ շրջանում, իսկ հետարդյունաբերական ժամանակահատվածում՝ նաև համաշխարհային բնույթ: Միայն վերջին երկու հարյուր տարիների ընթացքում Եվրասիայում և Ամերիկայում տեղի են ունեցել տարբեր ընդգրկումների և ծավալների ավելի քան 20 տնտեսական ճգնաժամեր, որոնք էապես ազդել են հասարակության զարգացման բոլոր ոլորտների վրա:

Առաջին համաշխարհային ճգնաժամը, որն ընդգրկեց ԱՄՆ-ի, Գերմանիայի, Անգլիայի և Ֆրանսիայի տնտեսությունները, սկսվեց 1857 թ.: Չնայած պատճառը ԱՄՆ-ում երկաթուղային ընկերությունների համատարած սնանկացումն էր ու արժեթղթերի շուկայի փլուզումը, դրան հետևեց բանկային համակարգի ճգնաժամը, որից առավել տուժեց Մեծ Բրիտանիայի տնտեսությունը: Հաջորդ համաշխարհային խոշորագույն ճգնաժամն սկսվեց 1873 թվականին Ավստրիայում ու Գերմանիայում և հայտնի է որպես ամենատևական: Պաշտոնապես դրա ավարտը 1878 թվականն է համարվում, թեև հետևանքները երկար ժամանակ զգալի էին համաշխարհային տնտեսությունում:

XX դարում ճգնաժամերը ոչ միայն ավելի հաճախակի դարձան, այլև մեծացավ դրանց ընդգրկումը, տևողությունը, վտանգավորության աստիճանը հասարակության առաջընթացի առումով: Ուսումնասիրելով հասարակության զարգացման վերջին 100 -110 տարիների պատմությունը՝ կարող ենք արձանագրել, որ ֆինանսատնտեսական խոշոր ճգնաժամեր բռնկվել են միջինը 10-12 տարվա ընդմիջմամբ, ընդ որում, նկատի ունենք այնպիսի ճգնաժամերը, որոնք ցնցել են համաշխարհային տնտեսությունը: Այդպիսին էր 1900–1901 թթ. ճգնաժամը, որը գրեթե միաժամանակ ընդգրկեց ԱՄՆ-ն ու Ռուսաստանը՝ կաթվածահար անելով մետաղագործության, իսկ հետո նաև քիմիայի, շինարարության և մյուս ոլորտները, կարճ ժամանակում վերածվելով համընդհանուր ճգնաժամի՝ ներառելով Անգլիան, Ավստրիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան և մյուս երկրները: Իր բնույթով «ահռելի» էր նաև 1907-1908 թթ. ճգնաժամը, որը պատմության մեջ հայտնի է «1907 թ. խուճապ» անունով: Դա մինչ այդ եղած ճգնաժամերից ամենաահեղն ու ամենադաժանն էր, որը ոչ միայն հարվածեց մի շարք երկրների տնտեսություններին, այլև բացահայտեց մասնավոր բանկային համակարգի «փխրունությունը» և խթան հանդիսացավ Դաշնային պահուստային համակարգի (Federal Reserve System) ստեղծման համար: Համաշխարհային երկու պատերազմների միջև ընկած կարճատև ժամանակահատվածում բռնկվեցին մի քանի խոշոր ճգնաժամեր, որոնցից իր ընդգրկմամբ և հասարակական-տնտեսական ու քաղաքական հետևանքներով հատկապես առանձնանում է 1929-1933 թթ. «Մեծ լճացում» անունով հայտնի ճգնաժամը: Այն հարվածեց բոլոր պետություններին (ինչ-որ առումով, թերևս, որպես բացառություն կարելի է նշել Խորհրդային Միությունը, որը, փակ և մեկուսացված լինելով, համեմատաբար քիչ զգաց դրա կործանարար ազդեցությունը): Ամենածանր հարվածը ստացավ ԱՄՆ-ի տնտեսությունը: Ճգնաժամի չորս տարիներին «պայթեց» 5761 բանկ՝ 5 միլիարդ ընդհանուր ներդրումային գումարով, արդյունաբերական արտադրությունը 1933 թ., 1929 թ. համեմատությամբ, նվազեց ավելի քան 46%-ով, 75-80%-ով ընկան գյուղատնտեսական ապրանքների գները, 70-75%-ով նվազեց արտաքին առևտուրը, գրեթե 50%-ով պակասեց ազգային եկամուտը և այլն: Այս ճգնաժամը ծանր ազդեցություն ունեցավ նաև մյուս խոշոր

պետությունների տնտեսությունների վրա՝ Գերմանիայում արդյունաբերական արտադրությունը գրանցեց 40,2% անկում, Ֆրանսիայում՝ 30,9%, Անգլիայում՝ 16,2% և այլն: 1933 թ. պաշտոնական տվյալներով 32 զարգացած պետություններում գործազուրկների թիվը գերազանցում էր 30 մլն-ը, այդ թվում միայն ԱՄՆ-ում՝ 14 մլն-ը: Ըգնաժամերի պարբերականությունը չխախտվեց նաև Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, և դրանք կրկնվում են նաև ժամանակակից պայմաններում: Եթե անգամ չենք կարող պնդել, թե մեր օրերում դրանք ավելի տևական են, ապա վստահորեն կարելի է ասել, որ հետևանքներն ավելի կործանարար են: Հետպատերազմյան մի շարք տնտեսական ճգնաժամերի (1948-1949, 1953-1954, 1957-1958, 1960-1961, 1969-1970) համեմատությամբ ամենաավերիչը 1974-1975 թթ. բռնկվածն էր: Այն սկսվեց ԱՄՆ-ում, Անգլիայում և ԳՖՀ-ում՝ գրեթե միաժամանակ ընդգրկելով նաև Ճապոնիան և արևմտաեվրոպական պետությունները: Ղա պայմանավորված էր արդյունաբերության ինտերնացիոնալացմամբ, զարգացած երկրների տեխնիկատնտեսական մակարդակների նույնականությամբ, ինչպես նաև ազգային տնտեսությունների փոխներթափանցմամբ: Այս ճգնաժամի հիմնական առանձնահատկություններից մեկը պարենամթերքի, հատկապես հացամթերքի անբավարարությունն էր, որը նոր երևույթ էր համաշխարհային ճգնաժամերի պատմության մեջ⁴: 90-ական թվականները նույնպես առանձնացան ֆինանսատնտեսական ճգնաժամերով, որոնցից մեր հանրապետության համար հատկապես զգալի էր Ռուսաստանի ճգնաժամի ազդեցությունը: Այն սկսվեց 1998 թ. օգոստոսի 17-ին, երբ Ս. Կիրիենկոյի կառավարությունը հայտարարեց դեֆոլտ արտաքին պարտքի հանդեպ: Ըգնաժամի պատճառներից կարևոր էին՝ ա) պետական պարտքի խոշոր ծավալները, բ) համաշխարհային շուկայում հանքահումքային ապրանքների, մասնավորապես՝ նավթի գների նվազումը և այլն: Ըգնաժամի հետևանքները Ռուսաստանի համար ունեցան ինչպես բացասական, այնպես էլ դրական նշանակություն: Բացասական հետևանքներից կարելի է նշել.

- կես տարվա ընթացքում դոլարի նկատմամբ ռուբլու կուրսի երեքանգամյա անկումը,
- բանկային համակարգի «կաթվածը» և դրա հանդեպ վստահության կորուստը,
- մի շարք բանկերի և ձեռնարկությունների սնանկացումը, ազգաբնակչության եկամուտների կտրուկ նվազումը, կենսամակարդակի անկումը և այլն:

Ըգնաժամն ունեցավ նաև դրական ազդեցություն.

- աճեց Ռուսաստանի տնտեսության մրցունակությունը,
- ռուբլու արժեզրկման հետևանքով ռուսական ապրանքներն իրենց էժանությամբ գրավեցին արտասահմանյան շուկաները՝ զարկ տալով տեղական արդյունաբերությանն ու արտահանմանը և այլն⁵:

Նույնիսկ հպանցիկ անդրադարձը համաշխարհային ճգնաժամերի պատմությանը բավարար է հասկանալու համար, որ համընդհանրացման և տնտեսության միասնացման ժամանակակից պայմաններում համաշխարհային

⁴ Стѳа Всемирная история, http://www.gumer.info/bibliotek_Buks/History/vsem_ist/16.php

⁵ Стѳа **Копылова Ю.**, Финансовый кризис 1998 года в России: причины и последствия, <http://fepolit.webstolica.ru/tematika-zasedanij-sng-po-et/finansovo-ekonomicheskij-krizis/finansovij-krizis-1998-goda-v>

տնտեսության որևէ անդամի նույնիսկ ամենափոքր «հիվանդությունը» կարող է վարակիչ լինել բոլորի համար՝ ավելի մեծացնելով հաջորդ ձգնաժամի վտանգը և՛ ընդգրկման, և՛ ծավալների, և՛ հետևանքների առումներով: 2008 թ. ԱՄՆ-ի հիպոթեքային շուկայում սկսված և հետագայում լուրջ ֆինանսատնտեսական բնույթ ստացած ձգնաժամն ասվածի վառ ասպացույցն է: Այն իր բացասական ազդեցությունն ունեցավ աշխարհի գրեթե բոլոր երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա: Այսօր, հինգ տարի անց, հետևանքները դեռևս շոշափելի են. մի շարք երկրներում, նաև՝ զարգացած, շարունակվում է տնտեսական ցուցանիշների անկումը, պահպանվում է գործազրկության բարձր մակարդակը, վտանգավորության շեմին է հասել պետական պարտքը: Մի շարք զարգացած երկրների տնտեսությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ձգնաժամը դեռևս հաղթահարված չէ և մոտ ասպագայում դժվար թե հաղթահարվի. ավելին՝ համաշխարհային ֆինանսատնտեսական զարգացումները կարող են նոր ձգնաժամերի բռնկումների պատճառ դառնալ:


ՀԲ տնտեսական կանխատեսումների ստորաբաժանման տնօրեն Հանս Թիմերը 2013 թ. հունվարի 17-ին Գայդարյան ֆորումի շրջանակներում հայտարարեց, որ «իրավիճակը համաշխարհային տնտեսությունում մնում է շատ վտանգավոր, և որ հանկարծախաս ցնցումների (շոկ) հավանականությունը շատ մեծ է»⁶:

Համաշխարհային ֆինանսատնտեսական սպասումների շարժընթացը, ընդհանուր առմամբ, կարելի է գնահատել երկու այլընտրանքային տարբերակով: Դրանցից առաջինը ենթադրում է ցածր տեմպերով և զիջումներով, սակայն աստիճանաբար դրսևորվող արագացմամբ ելք հետձգնաժամային իրավիճակից, ինչպես նաև զարգացած երկրների տնտեսությունների վերականգնում: Մինչդեռ, համաձայն երկրորդ տարբերակի, համաշխարհային տնտեսությանը սպառնում է ձգնաժամի երկրորդ ալիք, որն իր բացասական ազդեցությամբ կարող է ավելի վտանգավոր լինել: Սրա հավանականությունն իրականում փոքր չէ, քանի որ համաշխարհային ֆինանսներն ապահովվելու ված են և գտնվում են մեխանիկական կառավարման ռեժիմում, հետևաբար՝ կա սխալվելու հավանականություն: Եթե 2012 թ. մասնագետների 70%-ից ավելին հակված էր առաջին տարբերակի հավանականությանը, ապա մեկ տարի անց վիճակը փոխվել է և, ըստ վիճակագրության, երկու տարբերակները հավասարապես հնարավոր են համարվում:

ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ համաշխարհային տնտեսության աճը 2012 թ. նշանակալիորեն նվազել է, և մոտակա երկու տարիներին լուրջ փոփոխություններ, դրական իմաստով, չեն կանխատեսվում (գծապատկեր 1): 2012 թ. դեկտեմբերի 18-ին «Համաշխարհային տնտեսական դրությունը և հեռանկարները 2013 թ.» վերանայված զեկույցում բերված տվյալներն ավելի նվազ հուսադրող են, քան կես տարի առաջ հրապարակվածները: Համաշխարհային տնտեսական աճի 2013 թ. կանխատեսումը 2,4% է⁷:

⁶ St'ın Экономика в опасности, Всемирный банк предупреждает о вероятности новых внезапных шоков в мировой экономике, <http://expert.ru/2013/01/17/ekonomika-v-opasnosti>

⁷ Այս ցուցանիշը, ըստ «Համաշխարհային տնտեսական դրությունը և հեռանկարները 2012 թ.» զեկույցի, 3,2% է, 2014 թ.՝ 3,2%: Мировое экономическое положение и перспективы в 2012 году, Резюме, Организация Объединенных Наций, <http://www.un.org>



Պճապատկեր 1. Համաշխարհային տնտեսական աճի շարժընթացը⁸

Ջարգացման այսպիսի տեմպը բավարար չի լինի աշխատատեղերի վերականգնման և շատ երկրներում զբաղվածության ոլորտում առկա ճգնաժամի հաղթահարման համար: Ավելին, Եվրոպայից և ԱՄՆ-ից առնվազն հինգ տարի կպահանջվի աշխատատեղերի կորուստը չեզոքացնելու համար: 2012 թ. տվյալների համաձայն՝ գործազուրկների թիվն աշխարհում, 2011 թ. համեմատությամբ, աճել է 4 մլն-ով և հասել 197 մլն-ի: Ավելի շատ տուժել են երիտասարդները. 24 տարեկանից ցածր տարիք ունեցողների մոտ 13%-ը չի կարողանում աշխատանք գտնել: Եվրոպայում գործազրկության մակարդակը 20% է, իսկ առանձին երկրներում՝ Հունաստան, Իսպանիա, Իտալիա, Վիճակն ուղղակի անմխիթար է. գործազրկության մակարդակը հասնում է 25%-ի, իսկ երիտասարդների շրջանում՝ 50%-ի⁹: Կանխատեսումների համաձայն՝ 2013 թ. գործազուրկների թիվն ամբողջ աշխարհում կավելանա 5 մլն-ով և կկազմի 202 մլն մարդ, իսկ 2014-ին՝ ևս 3 մլն-ով¹⁰:

ՄԱԿ-ի մասնագետների գնահատմամբ՝ Եվրոգոտու խորացող ճգնաժամը, ԱՄՆ-ում առկա ֆինանսական պակասուրդի հիմնախնդիրը և Զինատանի տնտեսական ցուցանիշների կտրուկ նվազումը կարող են հանգեցնել նոր համաշխարհային հետընթացի¹¹, որը համաշխարհային ֆինանսական ակտիվների կրճատման, ֆինանսական հովանավորչության ուժեղացման պատճառ կդառնա: Ավելի ակնհայտորեն կարող են դրսևորվել արժույթային պատերազմները: Անխուսափելի կլինեն տնտեսական ակտիվության անկումը, զարգացող տնտեսություններից կապիտալի արտահոսքը, Եվրոյի արժեզրկումը:

Խնդիրների հաջորդ խումբը պայմանավորված կլինի վճարահաշվարկային համակարգերին սպառնացող ռիսկով, աշխարհի խոշորագույն բանկերի եկամտային և իրացվելի ակտիվների, ինչպես նաև կապիտալացման

⁸ St'u Мировое экономическое положение и перспективы в 2013 году, Резюме, Организация Объединенных Наций, <http://www.un.org>

⁹ St'u **Королева А.**, Работы все меньше, <http://expert.ru/2013/01/23/raboty-vse-menshe/>

¹⁰ St'u նույն տեղը:

¹¹ St'u Зона евро уже в рецессии, что чревато новым глобальным экономическим кризисом, Центр новостей ООН, <http://www.un.org>

մակարդակի նվազմամբ: Հսկայական վնասներ կարող է կրել նաև Եվրոպական կենտրոնական բանկը: Այս ամենը հաղթահարելու համար կպահանջվի պետական միջամտություն, բյուջեի բեռի ավելացում, որը կասկածի տակ կդնի խնդրահարույց երկրներին ձգնաժամային վիճակից հանելու համար ստեղծված Եվրոպական ֆինանսական կայունության ֆոնդի գոյությունը: Կարող է վտանգվել նաև միասնական արժույթի գոյությունն ընդհանրապես, որին կհաջորդի Եվրոմիությունից առանձին երկրների դուրս գալը: Ինչպես Եվրոպական միության երկրների, այնպես էլ ԱՄՆ-ի համար ամենալուրջ խնդիրն այսօր բյուջեի պարտքային ձգնաժամն է: 2011 թ. մայիսին ԱՄՆ-ի պետական պարտքը հասել էր առավելագույն մակարդակի՝ 14,3 տրիլիոն դոլարի, որը երկիրը կանգնեցրել էր պարտավորությունների չկատարման վտանգի առջև: Դրանից խուսափելու նպատակով 2011 թ. օգոստոսին ստորագրվեց բյուջետային վերահսկողության մասին օրենք (The Budget Control Act), որի հիմնական նպատակը բյուջետային ծախսերի կրճատումն էր: Համաձայն այդ նոր օրենքի՝ ԱՄՆ-ի պետական պարտքի վերին սահմանը բարձրացվեց 2,1 տրիլիոն դոլարով: Այս փոփոխությունը հնարավորություն ընձեռեց կառավարությանը՝ իրականացնելու հանձն առած պարտավորությունները: Այս օրենքը նախատեսում է նաև 10 տարվա ընթացքում պետական ծախսերի կրճատում 1 տրիլիոն դոլարի չափով: Ընդ որում այնպես, որ կրճատվող ծախսերը չազդեն երկրի մրցունակությունն ապահովող հիմնական ոլորտների (կրթություն, գիտություն, նորարարություն և ենթակառուցվածքներ) զարգացման վրա: Կրճատվող ծախսերը հավասարապես պետք է վերաբերեն ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական ոլորտներին: Արդյունքում, 1990 թ. հետո առաջին անգամ, ԱՄՆ-ի ռազմական ծախսերը կկրճատվեն 350 մլրդ դոլարով¹²: Բացի վերոնշյալ օրենքից, ԱՄՆ-ում ձեռնարկվեցին հակաձգնաժամային մի շարք այլ միջոցառումներ ևս, որոնց շնորհիվ, 2008 թ. սկսած, ԱՄՆ-ի Դաշնային պահուստային համակարգը (ԴՊՀ) բազային հաշվարկային դրույքը պահում է նվազագույն մակարդակի վրա և պլանավորում մինչև 2015 թ. կեսերը շարունակել այդ քաղաքականությունը: Ավելին, 2008 թ. նոյեմբերին մեկնարկեց QE-1 (Quantitative Easing 1՝ քանակական մեղմացում) ծրագիրը, և ձգնաժամը հաղթահարելու նպատակով 2010 թ. հունիսին ԴՊՀ-ն 2,1 տրիլիոն դոլար ընդհանուր արժողությամբ անհուսալի հիպոթեքային պարտքեր և այլ պարտատոմսեր գնեց: 2010-2011 թթ. իրականացվեց վերոնշյալ ծրագրի երկրորդ փուլը (QE-2), որի ընթացքում բնակարանային շուկայի և տնտեսության աճը խթանելու համար ԴՊՀ-ն ձեռք բերեց ևս 600 մլրդ դոլար արժողությամբ պետական պարտատոմսեր և հիպոթեքային արժեթղթեր: 2011 թ. սեպտեմբերին մեկնարկեց «Թվիստ» ծրագիրը, որը նպատակաուղղված էր արժեթղթերի փաթեթի վերակառուցմանը կամ, այսպես ասած, ընդհանուր շրջանառության մեջ երկարաժամկետ փոխառության տոմսերի կշռի ավելացմանը: Դրան հաջորդեց քանակական մեղմացման երրորդ՝ QE-3 փուլը, որը ենթադրում է ամսական 40 մլրդ արժողությամբ հիպոթեքային արժեթղթերի գնում¹³: Նշված բոլոր միջոցառումները կարող են ունենալ թե՛ դրական և թե՛ բացասական հետևանքներ: Բացասական հետևանք կարելի է համարել, երբ տնտեսությունը, անընդհատ իրակա-

¹² Стѣи Россия и мир: 2012. Экономика и внешняя политика. Ежегодный прогноз /Рук. проекта Дынкин А., Барановский В./ М.: „ИМЭМОРАН“, 2011, էջ 63:

¹³ Стѣи Запуск QE-3 принес первые плоды, <http://top.rbc.ru/economics/20/09/2012/670606.shtml>

նացվող էմիսիայի պատճառով, ողողվում է «էժան» փողերով: Կառուցվածքային բարեփոխումների բացակայության պայմաններում մեծանում է ինֆլյացիայի ռիսկը, որը կարող է ստագֆլյացիայի պատճառ դառնալ:

Համաշխարհային ֆինանսատնտեսական շարժընթացի օրինաչափությունների ուսումնասիրությունը խիստ կարևոր է այսօր մեր տնտեսության զարգացման դրսևորումներն առավել ճիշտ գնահատելու համար: Այսպես օրինակ՝ ՀՀ առևտրային հաշվեկշիռը, որը տնտեսական կայունության գնահատման կարևորագույն ցուցանիշ է համարվում, վերջին տարիներին, համաշխարհային գնողունակ պահանջարկի կրճատմամբ պայմանավորված, խիստ նվազել է: Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ այս ցուցանիշի առումով ԱՊՀ անդամ երկրներից ամենից շատ տուժել են Հայաստանը, Վրաստանը և Մոլդովան: 2011 թ. ՀՀ-ում առևտրային հաշվեկշիռի բացասական մնացորդը կազմել է 2,8 մլրդ ԱՄՆ դոլար: Տնտեսական աճի ցուցանիշով ևս հետ են հենց այս երկրները, ինչպես նաև Ռուսաստանը և Ուկրաինան (աղյուսակ 1): ՀՆԱ անկում արձանագրած աշխարհի պետությունների շարքում Հայաստանը չորրորդն է՝ Լատվիայից, Ուկրաինայից և Լիտվայից հետո:

Աղյուսակ 1

ԱՊՀ անդամ երկրների և Վրաստանի տնտեսական աճի շարժընթացը 2007-2014 թթ.¹⁴

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
ԱՊՀ և Վրաստան ¹⁵	8.9	5.3	-6.8	4.8	4.8	3.8	3.8	4.4
Վառելիք զուտ արտահանողներ	8.9	5.4	-6.3	4.7	4.7	4.0	3.8	4.4
Ադրբեջան	25.1	10.8	9.3	5.0	0.1	1.2	2.5	3.8
Ղազախստան	8.9	3.3	1.2	7.3	7.5	5.5	5.0	5.5
ՌԴ	8.5	5.2	-7.8	4.3	4.3	3.7	3.6	4.2
Թուրքմենստան	11.8	14.7	6.1	9.2	14.7	9.0	8.0	7.0
Ուզբեկստան	9.5	9.0	8.1	8.5	8.3	7.0	6.9	6.1
Վառելիք զուտ ներմուծողներ	8.4	4.6	-9.8	5.2	5.4	2.8	3.3	4.3
Հայաստան	13.7	6.9	-14.1	2.2	4.7	3.8	4.0	4.0
Բելառուս	8.6	10.2	0.2	7.7	5.3	3.9	3.1	5.0
Վրաստան	12.3	2.3	-3.8	6.3	7.2	4.8	5.0	4.0
Ղրղզստան	8.5	8.4	2.9	-0.5	5.7	0.2	3.5	4.0
Մոլդովա	3.0	7.8	-6.0	7.1	6.4	0.6	2.0	3.0
Տաջիկստան	7.8	7.6	4.0	6.5	7.4	7.0	5.7	5.0
Ուկրաինա	7.9	2.3	-14.8	4.2	5.2	2.0	3.2	4.0

¹⁴ Տե՛ս http://www.un.org/en/development/desa/policy/wesp/wesp_current/2013annex_tables.pdf (2012 թ. ցուցանիշները գնահատված են՝ հիմք ընդունելով փաստացի տվյալները, 2013 թ. և 2014 թ. տվյալները կանխատեսումային են):

¹⁵ Թե՛ն Վրաստանը 2009 թվականի օգոստոսի 18-ին պաշտոնապես դուրս է եկել ԱՊՀ կազմից, սակայն, ելնելով աշխարհագրական դիրքի և տնտեսական զարգացումների ընդհանրություններից, միջազգային կառույցները վերլուծությունների ընթացքում նշված երկիրը շարունակում են դիտել այս դաշտում:

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները գրեթե բոլոր երկրներում առավել սուր դրսևորվել են 2009 թ.: ՀՀ-ում, օրինակ, նշված ժամանակաշրջանում տնտեսական աճի ցուցանիշը 2007 թ. համեմատությամբ նվազել է 27 տոկոսային կետով: Ընդ որում, եթե ԱՊՀ անդամ երկրները դիտարկենք վառելիքի արտահանման կամ ներմուծման ոլորտում, ապա ակնհայտ է, որ վառելիք արտահանող երկրների տնտեսությունների վրա ճգնաժամի հետևանքներն առավել մեղմ վարքագիծ են դրսևորել (բացառությամբ ՌԴ-ի):

Վերը նշված ցուցանիշների անկումը չէր կարող չանդրադառնալ նաև գործազրկության, սոցիալական լարվածության և հատկապես աղքատության մակարդակի վրա: 2008 թ. 6.4%-ի դիմաց 2011 թ. գործազրկության մակարդակը ՀՀ-ում կազմել է 18.4%, որն, ի դեպ, տարածաշրջանում ամենաբարձրն է: Այդ ընթացքում ավելի է աճել աղքատության ցուցանիշը¹⁶:

ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվության մեջ հավանական ռիսկերը ներկայացված են հինգ հիմնական ուղղություններով, ընդ որում, առաջինը նշված են համաշխարհային տնտեսության զարգացումներից ածանցվող ռիսկերը: Եվ իրոք, առկա դրսևորումները մեկ անգամ ևս փաստում են, որ մեր տնտեսությունը համաշխարհային ամբողջական տնտեսության մասնիկն է, որի ապագա զարգացումներն ուղղակիորեն պայմանավորված են համաշխարհային տնտեսության հետագա ընթացքով: Հետևաբար՝ միայն համաշխարհային տնտեսության զարգացումների օրինաչափությունների ուսումնասիրությունը, վերլուծությունը և դրանց վրա հիմնված կանխատեսումները հնարավորություն կընձեռեն առավել ճշգրիտ գնահատելու մեր տնտեսության կարճաժամկետ, միջնաժամկետ, ինչպես նաև երկարաժամկետ հեռանկարները: Ժամանակին և տեղին կատարված գործողությունների, կտրուկ քայլերի և որոշումների շնորհիվ 1998 թ. ճգնաժամից Ռուսաստանը դուրս եկավ ավելի կայուն և մրցունակ տնտեսությամբ, ավելի հզորացած: Նույն միտումներն այսօր առկա են արևմտյան որոշ երկրներում: Համոզված ենք՝ խելացի քայլերի դեպքում մեր տնտեսությունը նույնպես կարող է ճգնաժամից դուրս գալ եթե անգամ ոչ ավելի հզորացած և ավելի մրցունակ, ապա գոնե առանց կորուստների:

¹⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2012, <http://www.armstat.am/am/?nid=45&year=2012>

ЛИЛИТ ОВАКАНЯН

Преподаватель кафедры „Финансов“ АГЭУ

Посткризисное развитие мировой экономики.— По оценке специалистов динамика мировых финансово-экономических ожиданий имеет два альтернативных сценария – оптимистический и пессимистический. По данным 2012 г. более 70% специалистов склонны были к вероятности осуществления оптимистического сценария. Но сегодня к сожалению, статистика такова, что вероятность обоих сценариев одинакова. И независимо от того обстоятельства, как будет протекать финансово-экономическое развитие, оно не может обойти нашу экономику. Исследование вероятных закономерностей и прогнозов даст возможность более основательно оценить краткосрочные и среднесрочные перспективы нашей экономики, а также определиться в выборе приоритетных направлений экономической политики.

LILIT HOVAKANYAN

Lecturer at the Chair of „Finance“ at ASUE

Postcrisis Development of World Economy.— The world financial-economic development in the opinion of the specialists is characterized by two alternative expectations, optimistic and pessimistic scenarios. In 2012 70% of the professionals were more likely to have an optimistic scenario. Nowadays, however, the statistics is that both scenarios are equally likely to become possible. And despite the fact what the course of the global financial and economic development will be our economy can't avoid it. Research and predictions of possible regularities will enable to carry out more reasonable assessments of short-term and medium-term prospectives of our economy, and define the choice of economic policy priorities.

